


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ն, Փ Ո Ր Ո Ս Ե Ա Ն

Նամակ կամ որ եւ է  
զրուած ինչպէս քէ ուղղել առ  
Տնօրին ԱՐՇԱԼՈՅՍ ջրագրի  
ԳԱՀԻՐԷ (Եգիպտոս)



ՔԱՆՈՐԴԱԳՈՒԹԻՒՆ

ԵԿԵՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դասիկն	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԵՐ	
Տարեկան	Յրակն 20
Վեցամսեայ	« 12

ՔԱՆՈՐԴԱԳՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԿԻԿ  
Եւ թղթատարի ծախքը  
հոնքագրութեան վրայ է:

Խոնքագրութեան ուղղուած  
գրութիւնք եւ չ'են տրուիր

ԱՋԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
Կանխիկ վճարելի են

E. TOROSSIAN  
Direc.-propr. du journal arménien  
ARCHALOUYOS  
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱՋԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԽՐԱԿՐԱԿԱՆ ԱՋԳ

ՍՐՏԱՍՈՂՄԱՆ Պատ. բաժն.

Նորոգելու է ջերմաստիճան կը խնդրուի որ բա-  
նակներէն նախորդ տարիէն մնացեալ պար-  
տաւ կը յայտնուի որքան նախ իրենց ԵՐԿՐՈՐԴ  
Տարեկանի բաժնետիրացիներ, եւ հարկ  
չը քողով մասնաւոր դիւնուներու, որով  
նոր դժուարութիւն մը պիտի ըլլան ԱՐՇԱ-  
ԼՈՅՍԻ արդէն բազմապատ Տնօրինութեան:

ՆԱՄԱԿ ԳԱՀԻՐԷՆ

ՈՐՈՒ ԲՈՂՈՔԵՆԸ

Փաշաներուն. մինչդեռ Փաշաները,  
Մուշեղ, դիւրամատելի չեն. ու եթէ  
մենք արհեստաւորներս արդարացի գան-  
գատի մը համար հոն երթանք, կարծելով  
թէ աղքատ ենք և դրամ կուզենք, առ-  
կաւին դրամ դուրսէն մեզ կը վճարեն:

Ազգ. Առաջնորդարանին դիմենք. —  
սակայն կ'ըսեն թէ հոն ալ մէկ մը գնա-  
ցողը փխշման է, մէկ մը չ'գացողը, մա-  
նաւանդ մեզի համար որ տակաւին Ազգ.  
տուրք ալ վճարած չենք (\*):

Արեւմտ հոգեւոր իշխանութեան դի-  
մենք. — Մենք ալ հարսնիքներէն գլուխ  
տուած չունին. անանկ է նէ, սպասենք որ  
սա քաղաքը Առաջնորդ մը ունենայ, որ-  
պէսպի հարուստի և աղքատի հաւասար աչ-  
քով նայի: Բայց կը կարծէք, Մուշեղ,  
թէ Առաջնորդի մը գալով սա դիւնա-  
տունը կը վերնայ սա մասնաւորը՝ որ  
իրենցմէ քիչ մը անդին ծալուած աւե-  
տարանի ըսածին պէս, ուղտը կը կլլեն. և  
եթէ մէկը բան մը հարցնէ իրենց, խաղաղ  
չ'ունինք կ'ըսեն:

Գեռ ո՞վ հրապարակած է մինչև հիմա  
թէ՛ այդ քառսին մէջ ինչե՞ր կը դառնան.  
ահաւաստի նմոյշները եթէ կուզէք: Եգիպ-  
տոսի հողին վրայ ոտք դնելէս ի վեր, կըր-  
ցածիս չափ սերտեցի Եգիպտական կեան-  
քին մուլ կողմերը. Եկեղեցին, Վարժա-  
րանը, Առաջնորդարանը, Աղքատախնայը,  
Գիւղը, Լսարաններն ու վերջապէս մար-  
դու ծնին ու մեռնիլը. մինչև իսկ անոր  
յաջորդող քերթիքն: Ասոնց հրամայող իշ-  
խանականներէն իւրաքանչիւրն իւր Սպա-  
նիական Գաղտնիք Հաւատաքնութեանը ու-  
նի, և ասոնք սև ձիթի պէս իրենց էֆէնտիա-  
կան տիտղոսին, պաշտօնին ա՛յնքան փա-

կած են, որ ամենին չեն ուզեր թողուլ,  
ինչպէս բնական է թէ՛ չ'պիտի թողէին՝ ե-  
թէ մէկը իրենց ըսէր թէ՛ աչքդ հանէ կամ  
ակուստ փրցուր:

Եւ գիտէ՞ք. մեր այդ ձրիատիտղոս  
էֆէնտիները, մեր Ազգ. իշխանական գոր-  
ծերուն մէջ, իւրաքանչիւրը իր ցուպը, իր  
գաւազանը ունի, ինչպէս մեր երկրին վա-  
լին ունէր իր հրէայ Շալոնը և կամ երբե-  
մըն կաթոլիկ Իսկէնտէրը:

Շալոնը կամ Իսկէնտէրը, որն ալ որ  
ըլլան, թատրոնին փերսէճիներն էին, որուն  
ներսը տեղի կ'ունենայ տուամը կա՛մ սակի-  
ներու հետ և կա՛մ Զիպայական «Յնժա և  
ուրախ լեր» յի բողոքողը...: Այսպէս են  
մեր էֆէնտիներն ալ՝ Ազգ. իշխանութեան  
ժառանգական թիտղոսներուն վրայ, որոնց  
նշանագրերը երբէք չեն փոխուիր, շնորհիւ  
դիւանագէտներու Շալոնութեան. առանց  
դիւանագէտի հրամանին Եգիպտական ծա-  
ուերէն տերև մը չ'շարժիր. և առանց անոր  
եղջիցի ըսելուն, մեռելի մը «անշարժ եղջիցին»  
չ'ըսուիր. ու դեռ մենք կը մտածենք թէ  
որո՞ւ բողոքենք. և արդարև որո՞ւ բողո-  
քենք. մեր Ազգ. Վարչութեան ուշադրու-  
թիւնը հրաւիրող շատ մը աղերսագրեր գա-  
ցեր են Ազգ. Առաջնորդարան. շատ մը  
բողոքներ յարուցուեր են, այս ու այն  
անհամար անիրաւութիւններու դէմ, որոց  
ամենէն թարմ տեսակներու իսկութիւնը  
կրնամ պատմել:

Անցեալ տարի կարգացուեցաւ «Արշա-  
լոյս» յի մէջ թէ՛ Հ. Կարապետ աղա Տ. Ա.  
դամեան, իւր որդւոյն նշանախօսութիւնը  
կատարած է Գաւառացի աղջկան մը հետ,  
ու իւր ծախքովը աղջիկը 20-30 աւուր հե-  
ռաւորութենէ մը հոս բերուելէն յետոյ,  
մերժած է, ձգելով դժբաղդ աղջիկը ան-  
խնամ ու անպաշտպան փրճակի մէջ. թէև  
այդ օրիորդը մինչև հիմա իմ ազգական-  
ներուս խնամքը կը վայելէ, սակայն գէթ  
գոհացումի մը համար ուղղակի կամ ա-  
նուղղակի առաջարկուեցաւ Տ. Ա. դամեանի  
որ փոքրիկ զոհողութիւնով մը նոյն աղջիկը  
հոս գէթ մէկ երկու տարի դպրոց դնէ.  
Տ. Ա. դամեան՝ իմ այդ առաջախօսութեանը (\*)  
երկրացիս, ոչ միայն իմ ազգականներուս  
նամակին չ'պատասխանեց, այլ և յամա-  
ռեցաւ աղջկան համար եղած ճգնապարհի  
ծախուց մի մասն ալ վճարել, յորմէ յե-  
տոյ ազգականներս խնդրագրով մը պատ-  
մեցին եղելութիւնը ուղղակի Ազգ. իշխա-  
նութեան:

Ինչո՞ւ համար Ազգ. իշխանութիւնը  
այդ խնդրագրերը նկատողութեան անգամ

չ'առաւ. միթէ անխօս աղջկան մը դէմ  
գործուած այդ անիրաւութիւնը, անխըղ-  
ճութիւնը պաշտպանող ազգականներս  
մե՞զը մը ըրած էին, նախ քան իրենց դա-  
տարանի դիմելը Ազգ. իշխանութեան դի-  
մելով և հետեւաբար անհրոտեանք այդ պար-  
տականութիւնը, որ ամէն մէկ Հայու  
համար իրաւունք մ'է սպասել Ազգ. Առաջ-  
նորդարանէն ո՞րպիտի անտրամաբանութիւն-  
ներով արգելօք կ'արգարանային. ու վերջ  
ի վերջոյ անոր տղուն ուրիշի մը հետ նը-  
շանախօսութիւնը ըլլալէ յետոյ, այս օրերս  
ալ կարգացուեցաւ խօսուեցաւ տուներու  
մէջ թէ՛ Բարեկենդանին տեղի ունեցած  
հարսնիքներու է՛ն փառաւորը եղած է:

Ինչպէս կը պատմէր Տիկին մը եկեղեցւոյն  
մէջ երբք օր յետոյ. — Գա՛ն՝ Նեվրիկ Հա-  
նրմ, իրա՛ւ են թէ հարսնեւորներու կառ-  
քերուն առջևէն 10-20 մէշէնչիկ վարսա-  
ճիներ վազցուցեր է: — Այդ ալ բան է  
Տուտու Հանրմ, տեսնէիր հարսնեւորը  
աչքը ետջիլի հագուած սքքուած հարսնե-  
ւորները, ռեճկ ռեճկ շամալը ճրագները,  
առատ խմելիքները, ուտելիքները, կուլա-  
ամեն ինչ լեփ լեցուն, մաշալա Հ. Կա-  
րապետ աղան մէկ տղայ մը ունէր, առօք  
փառօք կարգեց, Աստուած ամենուն ալ  
այդպէս նախախ ընէ: — Կը տեսնէ՞ք, քիչ  
մը յառաջ ըսած երկրացիս — Հ. Կարապետ  
աղան — այդ վհուկը, որ իր խղճին ու  
սրտին վրայ Եգիպտոսի սև աւազը լեցու-  
ցած առօք փառօք կը կարգէ իր տղան,  
առանց վայրկեան մը մտածելու թէ՛ անդին  
խեղճ աղջկան մը սիրտը արիւնտաւած, և  
անոր անմեղութեան դիւրատար հոգին վա-  
տաբար խռոված է, և ինքը Ազգ. իշխա-  
նութեան այդ ժանգոտած կէտիկիլին իր  
ամբողջ փոքրոգութիւնովը ուժեղ պաշտ-  
պանութիւն մը կը գտնէ անշուշտ սա մտա-  
ժուռով թէ՛ մայի՛շ. անի իրենց Հաճի ա-  
ղան է, ուզած տեղերին կը կապուի...  
և ուր ուրեմն Ազգ. իշխանութեան տրուած  
աղերսագրի հաւքարձումը կը վճուուի:  
Բայց թէ լոկ այդ մէկ հա՛տն է կը կար-  
ծէք, ուրիշը չ'կա՞յ միթէ. հէ՛յ հէ՛յ,  
դեռ ինչե՞ր կան պահուած և ինչե՞ր դեռ  
չ'լսուած:

Ազգականներս՝ եղբարք Շահրուգեան,  
Նշան անուն մաք յնաճիլի մը մեռնելէն վերջ,  
Ազգ. Առաջնորդարանին կը գրեն գրով մը  
թէ՛ այդ մարդը իրենց վրայ գումար մը  
պահանջ ունի. չեմ յիշեր որո՞չպէս թէ՛  
մինչև հիմա նոյն օրէն սրբան է անցեր  
ըսին. կարծեմ մտաւորապէս Տ-Յ ամիս  
անցած ըլլալու է. նոյնպէս որ դիւանա-

գիտական բոլոր անցուկ մտազուգի օրերէն վերջ կը ծախեն կը փոխեն դժբաղդին ա-

մեն ունեցածները, առանց երբէք վրան նայելու նոյն գրին թէ՛ ինչ էր, որով կ'ըսուէր թէ՛ այդ մաթիմատիկն պահանջ ունի եւն... և ինչո՞ւ արդեօք, բնականաբար թէ՛ որո՞ւ հոգ, որի՞ մտածում, մաթիմատիկն նշան մը. եղեր չէ եղեր, այլան ֆիլ, սարան ֆիլ:

Առ մենք մտածենք թէ՛ բողոքենք. բայց որո՞ւ բողոքենք. Աստուծոյ սիրունը սէիք, երբ մարդ մինչև այսքան յայտնի ու համարձակ կը տեսնէ առաջնորդարանի ա-

կնունքը. մկրտութիւնը. ամուսնութիւնը. թաղումը, որոց մէջ եղած անց ու դարձե-

րը որո՞ւ բողոքենք: Արո՞ւ բողոքենք, երբ անիրաւ, վաշխառու հօր ստացած խօսք կապը սակեղէն ըլլալուն համար դեռ չ'վերադարձուներ տի-

րոջը. մինչդեռ ինք մերժած է արդէն իր փեսայացուի նախկինը ու իր ազգիան ամուսնութիւնը աւելի հարուստին հետ շա-

տոնց լրացուցած է, մենք որո՞ւ բողոքենք: Բայց ես խորհուրդ կուտամ եգիպտոսի ամուսնութեան. հոս տուն տեղ չ'ունեցողներուն, որպէսզի այս տափակ երկրին մէջ ո՛չ մեռնին և ո՛չ ամուսնանան. իրենց մեռնելէն յետոյ իրենց ունեցած բնակարանը, գործը, խանութը, ինչ որ ունին, ազգ. իշխանութեան անխիղճ ու անմարդավայել պաշտօնէութեանը քմահաճոյքին ձեռքն է, պարզապէս սա դիւսնատան՝ ո-

տով կը խափանէ իրաւութիւններ. առանց մտածելու իր պարտականութեան անաչա-

ռութիւնը: Գիտեցէք անգամ մը Որբասիրացին եղած խաղերը, Որբասիրացին կանոնագիրը 2 տարիէ ի վեր չ'վաւերացներ. իսկ Հողատարինը մէկ աւուր մէջ, մէկ նստի մէջ կը վաւերացնէ, ամենէն իրաւացի գանգատները կը մոռցուին ու ամենէն պարզ ճշմարտութիւնները կը խեղաթիւրուին, որբերը կը զոհուին, որբերը կը տանջուին, իսկ զայն խնամող Ընկերութիւններ մեր առաջնորդա-

րանին ու դիւանաւանդ գերի կը լինին, յաջողութիւնները կուրացուին, սուտերը կը բազմապատկին, ստորութիւնը կը բերմանա-

ւորի, ձեռնարկները կ'արգելուին, և Յուդայի համբոյրներ. կը փոխանակուին. այս է ահա եգիպտոսի կեանքը որուն մնացորդ զիջեցին համար սպասեցէք. կ'աղաչեմ, մինչև որ անգամ մ'ալ գրելու պատեհու-

թիւն ունենամ:

ԱՐՏԱՇԷՍ Յ. ՅՈՎՍԷՓԵԱՆ  
28 Յուն. 1901 Գահիրէ

**ՀՐԱԽԻՐ**  
Մեր բարեկամներէն մին, անշուշտ ուրիշ գաղափարակիցներու կողմէ ալ թեւադրուած, հետեւեալ նամակը զրկած է խմբագրութեանս, զոր կը փութանք հրատարակել:

Գահիրէ, 29 Յունիւ. 1901  
Պատ. Խմբագրութիւն  
«Արշալոյս» լրագրի  
Ի քաղաքին  
Ինչպէս արդէն գիտէք եւ ծանուցիք «Արշալոյս»-ի միջոցաւ, Անաթոլ-Պրանս այս պահուս եգիպտոս կը գտնուի: Իր Հայաստան գործերը անշուշտ ծանօթ են ընթերցողացը. փափաքելի է որ Խմբագրութիւնը հրաւեր կարգայ տեղոյս Հայ գաղութին, իր կողմանէ համակրական ցոյց մը ընկու այդ ազնիւ ձրանսացիին:

Ընդունեցէք եւ այլն: Շ.

Մեր ազգասէր բարեկամին այս հրատեքր թէ՛ ո՛ր աստիճան շահեկանութիւն ունի, ամեն բացատրութիւնէ վեր է. ստուգելու կ'արժէ որ տեղոյս Հայ գաղութականութիւնը չ'զլանայ վէրքը պատելու համար Մուքարրակային առջեւ ծուկի չորած պահուն՝ Բարթոնեան սպաներէն մին իր զօրապետին դիտել տուաւ.

—Այս մարդը չենք ճանչնար, զօրավա՛րդ իմ:  
Միւսը ժպտուն պատասխանեց.  
—Իրաւ է, բայց մարդ մէյմը բժիշկը եւ մէյմըն ալ խոստովանահայրը չ'ճանչնար:  
Ու ճիշդով, վերաւորուած որունքը Արազուրի կրկնուց.  
—Բայց սա դեղին բիճը, հարցուց հարիւրապետ մը:  
— Իմ մէկ դեղս է, corrida ի վէրքերուն համար. ըսաւ ժուան:  
—Աղէկ:  
Բոլոր գործողութեանը միջոցին Մուքարրակայի խոշոր սեւ աչքերը Արազուրի աչքերուն մէջ յառած մնացին, ժուան հազիւ թէ լաթը Մուքարրակայի սրունքին վրայ դրաւ, Հայրուկայեան գոհութեամբ մը ըսաւ.  
—Հիմակուրնէ ինքզինքս լաւագոյն կ'զգամ:  
Ապա ըսաւ Արազուրի ժուանին:  
—Հիմակ ալ ազատ ես:  
—Բայց, զօրավա՛ր. . . ընդմիջեց սպայ մը.  
Մուքարրակա գլուխը բարձրացուց:  
—Բայց, Պարո՛նս, կարծեմ թէ՛ ասոր ըրած ծառայութեանը փոխարէն, ես իրեն շատ փոքր շնորհք մը կ'ընեմ:

**Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն**

**ԺՈՒՂ ՊԼԱՐՔԻ** (5)

**ՍԻԿԱՐԷԹԸ**

(Շարն. նախորդ թիւէն)  
—Ինչո՞ւ հոտ ես ուրեմն:  
—Որովհետեւ զիս հոտ զրին. ես չ'եմ կըռոււր, այլ իմիններս տեսնելու համար Պիլպաս կ'երթայի. սակայն պատերազմը թող չ'տուտու որ երթամ. ահաասիկ ամինը...:  
—Բժշկութենէ բան մը կը հասկնաս:  
—Ո՛չ, բայց բժշկել գիտեմ. պարապոյ ժամերուս ցլամարտիկ եմ...:  
Ապան քիչ մը կասկածոտ, զայն Մուքարրակայի առջեւ տարաւ, որ իր խոշոր սեւ աչքերը գեղեցիկ երիտասարդին վրայ յտոնց. Գարթոնեան զօրապետը անկէ բացատրութիւններ ուղղեց. Արազուրի վէպ մը հնարեց թէ՛ «Պիլպասի մէջ պաշարուած ծնողքը զրկելու կարօտով կը մրկէր. թէ՛ իր յանցանքը չէր, կ'ի՞նք քաղաքային պատերազմը ընտանիքները այսպէս կը բաժնէր. թէ՛ հրացաններու հարուածներուն մէջէն ինք իր ճամբան կ'երթար եւլն. եւլն»:  
—Ի՞նչ վասքօն ես, ինչո՞ւ հարազատ

թեկնածուին (Տօն Գարլոս) հետ չես, հարցուց Մուքարրակա:

—Որովհետեւ մարդու հետ չեմ:  
Քարթոնեան սպաները տարակոյտով կը քրննէին, կ'ուսումնասիրէին այդ խոշոր մարդը, այդ պատասխանը անոնց մէջ գեղեցիկութեան մըրմունջներ յարոյց. Մուքարրակա անոնց ձայները դադարեցնել տուաւ:  
—Ամէն մարդ ազատ է, ըսաւ քաղցրութեամբ:  
Ապա իր պայծառ նայուածքը ժուանի աչքերուն մէջ մխրճելով:  
—Ըսիր թէ բժշկել գիտես, կ'ընաս զիս սփոփել. շատ կը տանջուիմ, ըսաւ, եւ իր աբիւնէն ծանրացած եւ վեր վերցուած տափառին տակը մերկ ու արիւնաշաղախ սրունքը կը ցցնէր:

Արազուրի թիկնոցակը հանեց, փութով իր շապիկին ձախ թեղանիքը պատռեց եւ այդ յանպատրաստից վերակապին վրայ, դանդաղաբար առանց մարդ տեսնալու, ճերմակեղէնին ծայրը շարժակելով քանի մը կաթիլ հեղուկ թափեց—այն բազադրութիւնէն զօր մատանիին մէջը կը պահէր— ապա խիտ տեղոյն երկու քայլ յառաջացաւ Մուքարրակային կողմը, որ վայրկեան մը աչքերը վրայէն վերցուցած չէր:  
Արազուրի ձեռքը չէր դողար, այդ դեղին բիճով թրջուած լաթը ձեռքը բռնած աստին:

իր համակիր զգացումները արտայայտելու ամեն անոնց, որք իրենց գրելովը, իրենց սաղանդովը, — որպիսին է Պ. Անաթոլ-Ֆրանս — այս կամ այն ձևերն տակ, օգտակար եղած են այս տառապեալ ազգին:

Ամեն անոնք որ այս համակրական ցոյցին կը փափաքին մասնակցել կը հրաւիրուին գալ «Արշալոյս»-ի խմբագրատունը, մինչև առաջիկայ կիրակի, այս մասին տեսակցելու եւ Գործադիր մասնախումբ մը կազմուելու համար: ԽՄԲ.

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Բրէթորիա 27 Յունուար. — Լորտ Գիչնէրը Միտակցութիւն տանող կառախումբը անյաջող յարձակում մը կրած է Պօէրնբուր կողմէ, ասոնք յաջողած են միայն Առաջնորդ-չորեկառքը ուժանակով օդը հանել:

Բրէթորիա 26 Յունուար. — Պօէրնբուր անոնց կողմի վերադարձի մօտ ոստիկանական գունդէն 20 նորեկ զօրքեր գերի բռնած են, նոյնպէս Գէմպլըի ի հիւսիսային կողմը կենդանիներով եւ պաշարով լեցուած կառախումբ մը գրաւած են: Վերադարձի հարաւակողմը երկաթուղւոյ գիծը շատ տեղերէ կարուած է: Հարկուաւոր Պօէրնբուր ամսոյս 20 ին երկաթուղւոյ գիծը անցած եւ արեւմուտք ուղղուած են:

Պրիւքսէլ 26 Յունուար. — Կառավարական պաշտօնեայ մը Ռէյօլփէրի հարուածով մը ըսպաննեց Լիւքսէնպուրկ Նահանգի կառավարիչ Պ. Օրպան տը Գսիվրի: Մարդասպանը սպաննասպան եղած է:

Հաոմ 26 Յունուար. — Ասթայի դուքսը, Վիգօրիայ թագուհւոյն յուղարկաւորութեան ատենը Իտալիոյ թագաւորը պիտի ներկայացնէ:

Միլան 27 Յունուար. — Վէրտի այս առաւուտ ժամը 3 ին մեռաւ:

Միլան 27 Յունուար. — Վիգօրի Էմմանուէլ, Վէրտիի կողք արջկան եւ ընտանիքին ցաւակցական հետազոտի ուղղած է: Մեծ նուագահիւսին յուղարկաւորութեան հանդէսը պիտի կատարուի կառավարութեան ծախքով, շաբաթօրը, մեծ թուով պատգամաւորութեանց կ'ըսպասուի:

Քէյթթաուն 27 Յունուար. — Պօէրնբուր Գէմպլըի կառախումբը գրաւելէ ստալ Տըպլին Գիւլիլմոսներէն 20 պահակներ գերի բռնեցին: Պօէրնբուր կառախումբը այրած են, որը մեծ քանակութեամբ ցորեն եւ հաճար կը պարունակէր, ուրիշ կառախումբ մը հազիւ ձեռքերնուն ազատած է:

Կ. Պօլիս 27 Յունուար. — Գերմանիոյ կայս

սեր ծախքով շինուելիք մեծ աղբիւրին բացման հանգէսը մեծ շքով կատարուեցաւ այսօր Աթ-Մէյոսնի հրապարակին վրայ: Այս աղբիւրը շինուած է Գերմանիոյ կայսեր Պօլիս գալուէն յիշտակին համար: Մասնաւոր պատուիրակներ եւ Գերմանական Մօլթըք գպրոցանաւուն նաւազները ներկայ էին հանդեսին, ճառեր արարասանուեցան, որոնք հաստատեցին բարեգէպ համաձայնութիւնը կայսեր եւ Սուլթանի միջեւ:

Ա Ձ Դ

Հակառակ ամսոյս 26ին «Արշալոյս»-ի մէջ եղած ազգարարութեան, անդամներու մեծամասնութիւն չ'զայացաւ երէկ իրիկուան ժողովոյն մէջ: Հետեւաբար, ժողովը վերջնականապէս յետաձգուեցաւ վաղը, հինգշաբթի երեկոյ, ժամը 8 ին, միեւնոյն վայրը: Կը յուսացուի որ գէթ այս անգամ բաւական թուով անդամք ներկայ պիտի գտնուին:

Ի դիմաց Լուարան-Ընթերց. Ընկերութեան Ատենադպիր Ատենապետ Կ. Գ. ՈՒՂՈՒՆԵԱՆ Ա. ՊԱԼԵԱՆ

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

Հնդկաստան. — Շատ մը միջադէպներ պատահած են Վասիթի սահմանագիծին վրայ որք կրնան շատ մը դժուարութիւններ յառաջ բերել. Յունուար 14ին կիւմալի մէջ Նեյրքայի մօտ նամակատան ցրտիչ մը սպաննուած է, իսկ 15ին Մուլիպի մօտ պահակ կեցած Սիւրահի (Հնդկական զօրք) մըն ալ սպաննուած է: Նոյնպէս 15ին Սարվէքաի մօտ սուրհանդակ կողոպտուած, և Մօղալ-Հաթի ու Գաժուրի-Գաչի միջև հեռագրական թելը 11 տեղէ կարուած է: 14 ին Չարմէլանի մօտ տեղացի զինուորներէ բաղկացած պահականոց մը յարձակում կրած է և յարձակողները 2 հրացան առած են:

ՄԻԼԻՍԵԱՏԻՐ ՄՈՒՐԱՅԿԱՆ ՄԸ

Իտալիոյ մէջ Գօօօի մօտ դաշտի մը մէջ ցուրտէն մեռած մարդու մը դիակը գտնուած է մուրացկանի մը պէս հազուած: Գրպանին մէջը մէկ միլիոնի չափ արժեթուղթ ունի եղիւր:

մինչև ժուանին աներևութանալը հետեւեցաւ անոր...:

Նոյն իրիկուանը Հեռանի մէջ ձեր Կարրիտօն իրեն ընդհանուր սպայակոյտի կեդրոն եղող պանդոկին փոքրին սրահին մէջ տեսաւ խոշոր երիտասարդը, որ վից օր առաջ Աեուսթամէնթի հրապարակը իրեն հետ խօսեր էր. զինուորները գայն կը բերէին:

Չօրավարը վերջին աստիճան կատարած էր արևմտախնայ գէմք մը ունէր եւ հիւանդ ալ էր, գիշերուան պարտութենէն ի վեր անգագար կը խօսէր թէ՛ ուղեղը պիտի պայթեցնէր:

Արագուիլ ընդունուեցաւ շուրի մը պէս:

— Ի՞նչ կուզես... դուն, ո՞վ կրնայ եւրաշխաւորել թէ՛ դուն մեզ չ'մատնեցիր եւ այն թշուառական փարլօսեաններուն իմաց չ'տուիր...:

— Իմ ուզածս, զօրավարդ իմ, . . . ա՛յն է որ ձեզի հետ խօսիլ կուզեմ, բայց միայն ձեզի հետ:

Եւ երիտասարդը այնպէս որոշ եւ միկին կերպով Կարրիտօն խօսած էր, որ ձեր զօրավարը գուշակեց թէ՛ կարեւոր բան մը կար, նշան ըրաւ իր սպաններուն որ զիրենք միմակ ձգեցին:

— Ի՞նչ ուրեմն, ի՞նչ կայ, հարցուց աճապարանօք երրորդ միմակ մնացին:

Արագուիլ խօսելէ առաջ վայրկեան մը ըս-

ՏՕՔԹ ՔՕՐՆՖԵԼՏ  
Վ.ԿԱՅԵԱԼ ՎԻԷՆԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ

Նախկին Ներքին Բժիշկ Վիէնայի գըլխաւոր հիւանդանոցներուն: Մասնագէտ միզանցքային հիւանդութեանց, Գաղղիական արտի, կրկորդի, քիթի և բերնի հիւանդութեանց:

Ամէն օր հիւանդ կ'ընդունի կէս օրէ առաջ ժամը 10 էն 12, իսկ կէս օրէ վերջը ժամը 3 էն 5, իր տունը Շէրիֆ փաշա փողոց, ԱՂԵՔՍԱՆԻՐԻԱ:

ՎԻԳԹՈՐԻԱ ԹԱԳՈՒՀԻՆ  
1819-1901

(Շարժ. նախորդ թիւին)

Հինգ տարի վերջը միայն, սննամբ խորհրդարանը բացաւ իր նախարարներուն թախանձանքներուն վրայ (1866 յուն. 28): Անկէջ յետոյ միշտ շարունակած է Օղպօրն կամ Պալմօրսլ քաջուած սպրիլ, շատ ցոնցոտ կերպով երբեմն Լոնտոն գալով, առանց երբէք ընդունութիւններ տալու:

1868 ին խորհրդարանին անդամներէն մին առաջարկ մը ըրաւ, որով թագուհիին գահէն հրաժարելը եւ իր տեղը խնամակալութիւն մը հաստատուելը կը պահանջէր: 1871 Յունիսին Պ. Տիքարն Խորհրդարանին առաջարկեց քըննութիւն մը բանալ արքունի հաստութից վարչութեան վրայ, տեսնելու համար թէ՛ միջոցը կա՞յ առանց թագուհիին արժան սպասուութիւնը վերաւորելու, իր վերջնականապէս ընդունած այս տեսակ քաջուած կեանք մը անցնելովը կատարուած բոլոր խնայողութիւնները առնել:

1872 Յունուարին Կոլլէտի իշխանը — Թագուհիին անդրանիկ գաւազնը եւ գահաժողովը — ծանր հիւանդութենէ մը բռնուեցաւ եւ պահ մը վախճուեցաւ արքայազնին կեանքին համար: Թագուհին իր առանձնութիւնը ձգեց, Լոնտոն գաւկին քովը երթալու համար: Անոր բժշկութեան յետոյ, Վիգթորիայ թագուհին իր խորհրդարանի բացման ձառին մէջը ծանոյց թէ՛ հանդիսաւորապէս գոհարանական աղօթքներ պիտի կատարուի փետր. 27 ին, մայրաքաղաքին Մայր եկեղեցիին մէջ, եւ թէ՛ ինքը անձամբ արարողութեանը ներկայ պիտի գտնուի: Փետր. 28 ին զիւստակալական մարտիները ընդունելէ եւ փոքրիկ պատյա մը կատարելէ ետքը, երբ Պրքինկամի պալատը կը դառնար, Օ'Բօննօր ա-

պակց, կարծես թէ՛ լորձուքը կը պակսէր, սպա մէկէն ի մէկ ըսաւ.

— Չ'ըսի՞ք թէ՛, զօրավար, Մուքարրակայի կեանքը հարստութիւն մը կ'արժէր...:

Կարրիտօ չէր պատասխաներ:

— Այդ հարստութիւնը ուզելու եկած եմ, չահեցայ:

Չօրավարը յօնքերը պնտելով գայն կը դիտէր, եւ ինքզինքին կը հարցնէր թէ՛ արդեօք ճիշդ կը լսէ՞ր, ըսուածը իրականութիւն մ'էր քանի որ Արագուիլը հոն իր սոնլուը, ոտքի վրայ, գէմքը բոլորովին տօգոյն կանգնած էր:

— Ի՞նչպէս չահած, ըսաւ Կարրիտօ վայրկեանական լռութենէ մը ետքը. չեմ հասկնար:

— Շատ պարզ է սակայն ըսածս, պատասխանեց ժուան, Մուքարրակա ալ ձեր զինուորներուն վրայ կրակ չ'պիտի հրամայէ...:

— Մեռած է որ:

— Ըլլալու է, եթէ այս իրիկուան չ'մեռնի, վաղը անպատճառ: Մեր Կարրիտօն չ'սփազանց յուզուած էր, յետէր պիտիբերուն պէս ձերմակ էին: Արագուիլի «Վարդ անպատճառ»էն բան մը չ'հասկնալով ուզեց ամէն բան յու մը ըմբռնել: Ժուան իրեն պատմեց թէ՛ ինչպէս Քարլօսեան զօրապետը յրակուած էր, ինչպէս ուզած էր դաշոյնը սիրամ միսել, եւ վերջ ի վերջոյ ի՞նչպէս վիւաւորեալին վէրքին վրայ իրեն համար մատնիին մէջը պահած թոյնը կոթեցուցած էր:

(Շարժանակի)

Թարգմ. ԼԵՒԻՆ

Եւ Արագուիլի դառնալով.

— Ուրիշ ի՞նչ կուզես ինձմէ:

— Ոչինչ, պատասխանեց ժուան:

Մուքարրակա իր թիկնոցին գրպանէն Մանիլայի յարդէ փոքրիկ սիկարէթի առեփ մը հանեց եւ դայն ժուանի երկնցնելով.

— Իմ յիշատակս թող ըլլայ, ըսաւ:

— Ո՛չ, պատասխանեց ժուան:

— Օ՛հ... օ՛հ — եւ Մուքարրական ըսած ժամանակ կը ժպտէր — կը վախնամ որ Տօն փարլօսի ծառայողները շատ չ'սիրես, բան մը չ'ես ուզեր ինձմէ:

— Այո՛, սիկարէթ մը:

Արագուիլ սիկարէթի տուփէն papelito (սիկարէթ) մը առաւ, եւ մեքենաբար դայն նախելէ ու մատուրներուն մէջ դարձնելէ յետոյ, գրպանը կը դնէր, երբ Մուքարրակա հարցուց.

— Անունդ ի՞նչ է:

— Ժուան Արագուիլ:

— Աղէ՛կ, Արագուիլ, գնա՛, Աստուած հետք ըլլայ եւ քուկիներնոր տեսնալու համար սպասէ որ Պիլպօ մտնենք, հոգ մ'ըներ երկար չ'տեսեր... ձեռքդ տուր:

Արագուիլ խիստ սոգոյն վերաւորեալին երկնցուցած ձեռքը սեղմեց, թիկնոցակը հագաւ եւ շիտակ, սպաները եւ գերիները բարեւելով, կամաց կամաց առանց սնայարանքի հեռացաւ. փարլօսեան հերոսին պայծառ նայուածքը

նուն անձանք մը՝ վրան ատրճանակ մը պարպեց որ իր նպատակին չ'հասաւ :

Անկէց առաջ ալ թագուհին շատ մը սպաննութեան փորձերու առարկայ եղած էր . 1838 ին երկու անձանքներ փորձած էին գիշերանց զինք սպաննելու համար իր պալատը մտնալ , մին Պրքինկամի , իսկ միւր Վինտոօրի մէջ : 1840 յունիս ի 11 ին Գոնսթինի շէն Հիլի մէջ , մինչ Ալպէր իշխանի ընկերակցութեամբ պտոյտէ մը կը դառնար , վրան ատրճանակի երկու հարուած պարպեցիր : 1840 զեկտեմբերին թագուհին արգուազարդի դահլճին բազմոցին տակը կծկտած գտան 17 տարեկան երիտասարդ մը՝ որ կ'ուզէր զինքը սպաննել :

Վերջապէս 1850 յուն . 25 ին , իր երեք զաւակներուն հետ եղած միջոցին , գլխուն գաւազանի հարուած մը կերաւ : Բոլոր այս արքայասպանութեան յանցաւորները դատապարտուեցան ոչ իբր արքայասպաններ , այլ իբր խնդրեալ եւ Պէրլէմի ( յիմարանոց ) մէջ փակուեցան :

1876 մարտին , թագուհին Տիլդրաէլի-Տէրպի Նախարարութեան միջոցաւ Սորբոնի քոլեջը ուղեց որ իրեն կայսրուհիի տիտղոսը տան : Հասարակաց խորհրդարանին մեծ ամասնութիւնը հաւանեցաւ քուէարկելու մարտ 20 ի օրինական ծրագիրը եւ ապրիլի 7 ին ալ նոյնը ըրաւ Լորտերու ժողովը : Այս միջոցին թագուհին Գերմանիա ճամբորդութիւն կ'ընէր : Պատէն-Փոպուրկ գնաց եւ հոն Գերմանիոյ կայսրուհիին եւ Վիլհելմի իշխանուհիին այցելութիւնը ընդունեց , ապա Լոնտոն վերադարձաւ կալէսի իշխանը ընդունելու համար որ մայիս 5 ին Հնդկաստանի ճամբորդութենէն կը վերադառնար :

Ալպէր իշխանին հետ ամուսնութեամբ թագուհին 9 զաւակ ունեցաւ : Վիլհելմի Ստեփանի Մէրի-Լուիզա . 1840 ին ծնած եւ ամուսնացած է Գերմանիոյ հանգուցեալ Ֆրէդերիկ-Վիլհելմ կայսեր հետ . հետեւաբար արդի Գերմանիոյ կայսեր մայրն է : Ալպէր հաուարա կալէսի իշխան-գահաժառանգ- 1841 ին ծնած է եւ որ ամուսնացած է Տանիմարքաի Ալքսանտրին իշխանուհիին հետ : Ալիս-Մատ-Մէրի 1842 ծնած : Ալիքիս , էրնէսթ-Ալպէր 1844 ին ծնած : Հէլէնա Օկուսթա-Վիլհելմի 1846 ին ծնած : Լուիզա Գարոլինա-Ալպէրի 1848 ին ծնած : Արթուր-Վիլհելմ-Բէթրիկ-Ալպէրի 1850 ին ծնած : Լէօթօր-Ճօրն-Տընքան-Ալպէրի 1853 ին ծնած : Պէտրիս Մէրի-Վիլհելմի-Թէօտօրա 1857 ին ծնած :

Թագուհին « Մահուան եւ յաւիտեականութեան վրայ խորհրդածութիւնք » անուանով գիրք մը տպել տուած է 1863 ին , Ալպէր իշխանին քով գտնուած թղթերով , որք իրեն նուիրուած էին :

Ատկէց դատ « Սկովտիոյ լերանց մէջ մեր կենաց օրագիրը » անուանով գիրք մ'ալ հրատարակել տուած է 1869 ին , եւ ուրիշ գիրք մ'ալ գրած է իր օրագրէն հատուածներ պարունակող : պէտք է ըսել թէ թագուհին մինչեւ իր վերջին օրերը յուշատար բռնած է :

Հելվետի վիճակագրական տեղեկանքներ 1901

2048	2816	9352	1796	763	364
574	962	989	1130	1478	2158
4935	5035	5208	5350	5529	6099
6262	7534	7554	8113	8361	8819
9395 9405 9787					

Հրէից բարեգործական վարձարանի վիճակագրական տեղեկանքներ 1901

3708	3949	2220	114	461	937
1208	1334	1918	1984	2173	2747
2917	2973	3076	3681	3986	5059
5094	5129	5207	6482	6667	7680
7748	8132	8165	8254	8573	8789

Տպարարութիւն Ժողովուրդային Տպարարչութիւն

# Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԵՐ

Պաշարի փողոց . Խաղնէտարի սեփականութիւն , Պրիսթլ Օթէլի ճիշդ դիմաց , Գաթէ Տը Լա Պուրսի կից :

Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՒՈՐ ԳԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ 6500 ՄԱՍԱՃԻԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ներս են եւ ասոնցմէ մինչեւ ցարդ 17, 000, 000 ծախուած է :

400 է աւելի վկայականներով եւ մեքայնետով վարձատրուած , երաշխաւորեալ մեքենաներ ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՐ ՎԱՐՉՈՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանոցի իսկն մէջ ստացած է :

ՀԱԳԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

ԱՐՔՈՒՆԵՐԻՆ

ԵՒ ԹԱԳՍԻՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵՍ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե. Բ. ԱՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ , ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ ի յատկանշին :

ԳԻՆ ՉՈՓՍՈՐ

Չրի դասեր եւ նորոգութիւններ , ՍԻՆԿԵՐ մեքենայից համար , յաճախորդաց տուններուն մէջ :

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւններն մեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

## ՄԱՆԿԱԲԱՐՉ ՏԻԿԻՆ ՍՈՓԻԿ ԱՉԳԱՊԵՏԵԱՆ Եւրոպայի Ազգային Ազգային

Վերջերս իւր ընտանիքինը Սուրբ-Ստեփանի փոխադրած է Եւրոպայի Ազգային Ազգային Շէրիֆի պարտիզին դիմաց , Ահմէտ պէյ Ապտիւլ Բազզիի 20 թիւ սեփականութեան մէջ :

Տիկին Սոփիկ Ազգայնեան իւր փորձառութեամբ եւ յաջողակութեամբ արդէն ծանօթ ըլլալով գահիէրեան ազգայնոց եւ նոյն իսկ օտարաց , աւելորդ կը համարուի զայն յանձնարուել իւր խնամոցը պէտք ունեցողներուն :

Վկայեալ աղքատներուն համար ձրի դարմանում :

### ՄԻՆԱԲ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՅ ԺԱՄԱՅՈՅԻՒՆ

Գոնի որ ՍԷՎԱՃԵԱՆ վաճառատուն մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 Վիճի նիքէլ , կոթէն լարուղ սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւ դեալ է : Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐՇ է սկսեալ մինչեւ 2500 ՂՐՇ : Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ , նիքէլ , եւ քսիտէ ժամացոյցներ . պատիւ եւ բօնաւ ի քաղաքական Բանտիւլներ եւ ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք :

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկայի մօ . նօկրաֆներու :

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ ԶԻՄՆԱԿ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻՒԼ ԱՉԻՉԻ ՍԿՂԷԸ Օսմանիյի ղեղարմանի ղիւնացի փողոցին մէջ :

Ժողովրդական տպարանին մէջ կը պատրաստուին .

Այցեխարտեր , Երգարտարաններ , Գիրքեր , Հրատարակչութիւններ , Տեղեկագիրքներ , Կանոնագիրքներ , Տոմարներ եւ այլ եւ այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւններն կը փաճ տուին հետեւեալ գրքերն .

1. ԲՆԱՇԻՍՏՐԻԿ ԲՍՍՈՍՍՆԻ Ս . Ե . Բ . պրակներն , որոնք նոր հասած են եւ որոյ մասին արդէն խօսուած է « Արշալոյսի » մէջ :
2. ՈՐԲՈՒՆԻ , որ նոյնպէս նոր հասած է եւ որոյ ի թուրքիա մուտքը , ինչպէս կը լսենք , արգիւտած է եղեր :
3. ՀՍՒԱՔԱՏՈՅ Հայոց ժողովրդական երգերու , Փարիզ տպարանաւ , Տնօրինութեամբ Տ . Լեոն Եղիազարեանցի :
4. ՉՈՒԱՐՃԱԼԻ Անիքթոններ եւ ժողովրդական վէպիկներ կամ Մարգարային կենաց վարագոյրը եւ ուրիշ նոր հրատարակութիւններ :

## ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀՈՒ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒԹՅՈՍԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՐԵԱԼ ԴԻՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահարածիները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպատակի զուճարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ եւ ընկերութիւնն մէկ միլիար աւելի է :

Ս . ԼԷՕՒԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Կահիրէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ եւ ինչ կերութիւնն աւելի երաշխաւորութիւններ , ընդարձակ գործառնութիւններ եւ հրատարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի եւ աւելի ապահովագրի կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎՂՉՈՆ ԳԼԽԱՆՈՐ ԳՈՐԾԱԿատար յ'Աղքատագրիս :